ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունվարի 2021 թվականի N 39-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տաշիրի համայնքապետարանի ճարտարապետության, քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի կողմից Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության հատկանիշներով նախատեսված **Գագիկ Նորիկի Մինասյանը** (նույնականացման քարտ՝ 003709813,տրված՝ 13.01.2015-ին,053-ի կողմից,ՀԾՀ՝ 2101620510) կողմից վարչական իրավախախտում կատարելու հիմքով 2021 թվականի հունվարի 25-ին կազմած 1/1 արձանագրությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության, 219.1-րդ հոդվածի 3-րդ պարբերության, 23-րդ հոդվածի 2-րդ մասի, 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ պարբերությունների, 37-րդ, 281-րդ, 282-րդ և 283-րդ հոդվածների պահանջներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով , 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետերով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ,Տաշիր համայնք,Կաթնառատ,փողոց 5,նրբ.2,տուն 5 հասցեի բնակիչ **Գագիկ Նորիկի Մինասյանին** ենթարկել վարչական պատասխանատվության Հյաստանի Հանրապետության վարչական իրավախատումների մասին օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությամբ նախատեսված արարքը կատարելու համար և նշանակել տուգանք 100000 ( հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275081298 հաշվարկային հաշվին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելու օրվան հաջորդ օրվանից:

4. Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում;

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. հունվարի 26

ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունվարի 2021 թվականի N 40-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Նարինե Վարդանյան»-ի 2021 թվականի հունվարի 26-ի N19 հայտը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 1 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Նարինե Վարդանյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2021 թվականի առաջին և երկրորդ եռամսյակների համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. հունվարի 26
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2021 թվականի N 41-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՐԹՈՒՐ ԱՆՏՈՆՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ՁԱրթուր Անտոնյան»-ի 2021 թվականի հունվարի 26-ի N20 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝**

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ.Նովոսելցովո, 2-րդ փողոց, տուն 53 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Արթուր Անտոնյանի»-ի հայտը բավարարել և նրան տալ 2021 թվականի առաջին եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. հունվարի 26
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունվարի 2021 թվականի N 42-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՏԱՇԻՐ, ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ, ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-008-0020-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՈՒՍԱՆՆԱ ԱՐՄԵՆԱԿԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Սուսաննա Արմենակի Մովսիսյանի (ծնված՝ 29.07.1965-ին) լիազորված անձ Էդգար Սերոբյանի (անձնագիր՝ AT0553662, տրված՝ 31.08.2020-ին, 039-ի կողմից) դիմումը (մուտք՝ 21.01.2021, ՄԴ18-21), «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43 հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 2րդ և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով, 48-րդ կետով, նկատի ունենալով, որ տան կառուցապատման և սպասարկման համար օրենքով հատկացված 600 քմ և կից ավել օգտագործվող 300 քմ վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված և ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Հաշվի առնելով, որ ըստ չափագրման արդյունքների տնատիրության զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 900 քմ, և այն, որ շինությունները կառուցվել են 1959 թվականին՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. Օրենքի ուժով ճանաչել Սուսաննա Արմենակի Մովսիսյանի սեփականության իրավունքը Լոռու մարզի, համայնք Տաշիր, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 32 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0020-0007) բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական հատկացված 600 քմ և բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 300 քմ մակերեսով հողամասի նկատմամբ, ընդամենը՝ 900 քմ:

2. Հողամասի սահմանային չափերը որոշվում են ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Ճանաչել Սուսաննա Արմենակի Մովսիսյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի 06-008-0020-0007 կադաստրային ծածկագրով տնատիրության սպասարկման համար անհրաժեշտ 900 քմ մակերեսով հողամասի վրա կառուցված բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «Արտյոմ Սաթանյան» ԱՁ-իկողմից կազմված շինություններիբնութագրի:

4. Տնատիրությանը ՀՀ Լոռու մարզ, ք. Կալինինո, Կիրովի փողոց, թիվ 32 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, թաղամաս 1, Երևանյան փողոց,թիվ 32 բնակելի տուն հասցեն:

5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. հունվարի 26
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2021 թվականի N 43-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՍՈՒՍԱՆՆԱ ՊԱՌԱՎՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Սուսաննա Պառավյանի» կողմից 2021 թվականի հունվարի 29-ի N 21 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, թաղամաս 1 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Սուսաննա Պառավյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2021 թվականի երկրորդ և երրորդ եռամսյակների համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. հունվարի 29
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2021 թվականի N 44-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տաշիրի համայնքապետարանի ճարտարապետության, քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի կողմից Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության հատկանիշներով նախատեսված **Կառլեն Նիկոլայի Սուքիասյանի** (անձնագիր՝ AN0715743,տրված՝ 18.11.2013-ին,039-ի կողմից) կողմից վարչական իրավախատում կատարելու հիմքով 2021 թվականի հունվարի 27-ին կազմած 1/2 արձանագրությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումնրի մասին օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության, 219.1-րդ հոդվածի 3-րդ պարբերության, 23-րդ հոդվածի 2-րդ մասի, 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ պարբերությունների, 37-րդ, 281-րդ, 282-րդ և 283-րդ հոդվածների պահանջներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով ; 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետերով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ,Տաշիր համայնք,քաղաք Տաշիր,փողոց Պուշկինի,տուն 30 հասցեի բնակիչ **Կառլեն Նիկոլայի Սուքիասյանին** ենթարկել վարչական պատասխանատվության Հյաաստանի Հանրապետության վարչական իրավախատումների մասին օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ նախատեսված արարքը կատարելու համար և նշանակել տուգանք 200000 ( երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275081298 հաշվարկային հաշվին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելու օրվա

հաջորդ օրվանից:

4. Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում;

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. հունվարի 29
ք.Տաշիր

Ստացել եմ [illegible]
01.02.21թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

29 հունվարի 2021 թվականի N 45-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԼԵՌՆԱՀՈՎԻՏ, ՀՐԱՊԱՐԱԿ ԹԻՎ3/ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽԱՆՈՒԹԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Վարդգես Արամայիսի Հակոբյանի (անձնագիր՝AN0396800, տրված՝ 04.03.2013-ին) դիմումը (մուտք՝ 27.01.2021-ի ՄԴ34-21 ) ,Հայաստանի հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 25.12.2020 -ի թիվ ԼԴ3/0520/02/20 վճիռը, ԱՁ «Արտյոմ Սաքանյան»-ի կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառվարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 9-րդ և 11-րդ կետերով,17-րդ կետով, 18-րդ կետի բ) ենթակետով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի գ) ենթակետը, 48-րդ կետը, նկատի ունենալով,որ ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և այն, որ ինքնակամ կառույցները իրականացվել են 2018թ-ին՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Լեռնահովիտ, Հրապարակ թիվ 3/1 խանութ հասցեում Վարդգես Արամայիսի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող, 06--039-0027-0002 ծածկագրով 0.00854 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 70.7 մակերեսով խանութը՝ համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հատակագծի՝

2.. Հողամասի սահմանները որոշվում են համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված և ԱՁ «Արտյոմ Սաքանյան»-ի կողմից կազմված հատակագծի:

3. Պարտավորեցնել ինքնակամ կառույցն իրականացնողին՝ Վարդգես Արամայիսի Հակոբյանին սույն որոշման ընդունման օրվանից 60 օրյա ժամկետում օրինականացված կառույցի համար համայնքի բյուջե վճարել՝ 49050 (քառասունինը հազար հիսուն) ՀՀ դրամ:

4. 60 օրյա ժամկետում սահմանված գումարը համայնքի բյուջե չվճարելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

5. Խանութին տրմադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Լեռնահովիտ, Հրապարակ թիվ 3/1 խանութ հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. հունվարի 29
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 9
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2021 թվականի N 46-Ա

## ՍԼԱՎԻԿ ՀԱՅԿԱԶԻ ԱՆԱԽԱՍՅԱՆԻՆ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն *որոշումով, ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի* 25-ի N97-Ն որոշումով հաստաված հավելված 1-ի 3-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Սլավիկ Հայկազի Անախասյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հունվարի 26-ի ՄԴ 21-21)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1.Սլավիկ Հայկազի Անախասյանին տալ ավտոտնակի, ամառային խոհանոցի, անասնաշենքի, կաթսայատան, մառանի և բաղնիքի քանդման թույլտվություն:
2.Սլավիկ Հայկազի Անախասյանը պարտավոր է Տաշիրի համայնքապետարանի 900275081215 հաշվեհամարին մուծել 5000 (հինգ հազար) դրամ տեղական տուրք՝ քանդման թույլտվության համար:
3. Կառուցապատողը քանդման աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. հունվարի 26
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2021 թվականի N 47-Ա

### ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ԽՈՏՀԱՐՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ և 76-րդ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբեր 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշումով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2018 թվական հոկտեմբերի 15 «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի արոտավայրերի և խոտհարքերի օգտագործման համար վճարի չափը սահմանելու մասին» N 87-Ն որոշումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով Տաշիր համայնքի սեփականությունը հանդիսացող 06-076-0313-0042 կադաստրային ծածկագրով 62.8 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 2-րդ կարգի խոտհարքը վարձակալությամբ տրամադրել Վլադիմիր Արայիկի Հարոյանին:

2. Վլադիմիր Արայիկի Հարոյանի հետ կնքել խոտհարքի վարձակալության պայմանագիր 3 տարի ժամկետով, տարեկան 439600 (չորս հարյուր երեսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ վարձավճարով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ե. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. հունվարի 29
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2021 թվականի N 48-Ա

## ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48 և 76, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբեր 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշումով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2018 թվական հոկտեմբերի 15 «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի արոտավայրերի և խոտհարքերի օգտագործման համար վճարի չափը սահմանելու մասին» N 87-Ն որոշումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝**

1. Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով Տաշիր համայնքի սեփականությունը հանդիսացող 06-076-0313-0044 կադաստրային ծածկագրով 40.0 հա գյուղատնտեսական նպատակային 4-րդ կարգի արոտավայրը վարձակալությամբ տրամադրել Վլադիմիր Արայիկի Հարոյանին:

2.Վլադիմիր Արայիկի Հարոյանի հետ կնքել արոտավայրի վարձակալության պայմանագիր 3 տարի ժամկետով, տարեկան 183600 (մեկ հարյուր ութսուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ վարձավճարով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. հունվարի 29
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2021 թվականի N 49-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԳԱՅԱՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Գայանե Գասպարյանի»-ի 2021 թվականի հունվարի 29-ի N22 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Բաղրամյան փողոց, թիվ 19Ա հասցեում գործող անհատ ձեռնարկատեր• «Գայանե Գասպարյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2021 թվականի առաջին եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն: 2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. հունվարի 29
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2021 թվականի N 50-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ, 6-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ, ՋԱՀՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 8 ՀԱՍՑԵՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆՈՐ ՕԲՅԵԿՏԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով, 32-րդ և 48-րդ ենթակետերով և հիմք ընդունելով 22.04.2008-ին տրված անշարժ գույքի սեփականության ( օգտագործման ) իրավունքի գրանցման N 2510714 վկայականը, «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի ն հատակագիծը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝**

1.ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 6-րդ թաղամաս, Ջահուկյան փողոց, թիվ 8 «ա» հասցեով անշարժ գույքի առանձնացվող օբյեկտին տրամադրել փոստային հասցե՝ համաձայն «Գուգարաց աշխարհ»ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի բաժանման սխեմայի՝

1) 0,05186 հա մակերեսով գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, 6-րդ թաղամաս, Ջահուկյան փողոց, թիվ 8/1 հասցեն:

2) 0.07769 հա մակերեսով գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, 6-րդ թաղամաս, Ջահուկյան փողոց, թիվ 8/2 հասցեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. հունվարի 29
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունվարի 2021 թվականի N 51-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

Սույն թվականի փետրվարի 1-ին գումարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 1-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի N 103-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 30-ի N 7-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին :

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 30-ի N 8-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 30-ի N 9-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին :

7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասերը աճուրդով օտարելու մասին:

8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական սահմաններում գտնվող որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն փոխանցված հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

9, Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. հունվարի 29
ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2021 թվականի N 52-Ա

## ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ԽՈՏՀԱՐՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ և 76-րդ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբեր 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշումով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2018 թվական հոկտեմբերի 15 «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի արոտավայրերի և խոտհարքերի օգտագործման համար վճարի չափը սահմանելու մասին» N 87-Ն որոշումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝**

1. Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով Տաշիր համայնքի սեփականությունը հանդիսացող 06-076-0313-0034 կադաստրային ծածկագրով 14.6 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 2-րդ կարգի խոտհարքը վարձակալությամբ տրամադրել Վլադիմիր Արայիկի Հարոյանին:

2. Վլադիմիր Արայիկի Հարոյանի հետ կնքել խոտհարքի վարձակալության պայմանագիր 3 տարի ժամկետով, տարեկան 102000 (մեկ հարյուր երկու հազար) ՀՀդրամ վարձավճարով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. հունվարի 29
ք.Տաշիր